

## Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՀԱՅԱԶԳԻՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄ ԲԱՐԾԱՄԻ ՊԱՇԱՍՈՒԽՆՁՈՒՄ

Հնագույն Բարշամ և հեթանոսական Բարշամին աստծու մասին տեղեկություններ քաղում ենք Սովուս Խորենացու, Ազարանգեղոսի և Անանիա Շիրակացու աշխատություններից: Տիգրան Միջինի (պատմական Տիգրան Մեծ) նվաճումների արդյունքներից է մեր պատմահայրը համարում նաև այն, որ «Բնքն իջանէ ի Միջագետս, եւ գտեալ անդ զՔարշամինայ զպատկերն, զոր ի փողուկրէ եւ ի բիրեղէ կազմեալ եր արծաթով՝ հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան»:<sup>1</sup> Թորդանի հեթանոսական տաճարը, ըստ Ազարանգեղոսի, կործանել էին Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ քաջավորը. «Սեհեան անուանեալ սպիտակափառ դիցն Բարշամինայ. նախ զնա կործանեին. եւ զպատկեր նորին փշրէին»:<sup>2</sup> Այս աստծու վիպական զուգահեռ կերպարը ուղղակի Բարշամ է կոչվում: Բարշամի դեմ Արամ նահապէտի տարած հաղթանակի առքից մեր պատմահայրը հաղորդում է հետևյալը. «Սնա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբագումս ի նոցանէ սատակերով. իսկ Բարշամ առաջի զինակրաց նորա պատահեալ՝ մտանի: Եւ զայս Բարշամ վասն իրոց արութեան բազում գործոց աստուածացուցեալ պաշտօնին Ասորից ժամանակս յոլովս»:<sup>3</sup> Բարշամի մասին Անանիա Շիրակացին հաղորդում է հետևյալը. «Դարձեալ ունանք յառաջնոցն Հայոց ասացին թէ՝ ի խիստ ձմրան Վահագն նախնի Հայոց զողացաւ զյարդ Բարշամայ ասորեստանեայց նախնոյ, զոր եւ մեր սովորեցաք բնախօսութեամբ Յարդագողի հետ անուանել»:<sup>4</sup>

Ինչպես տեսնում ենք, Վերջին երկու հաղորդումներում պահպանված են Բարշամի աստվածային անցյալի վերիուշը և իր բուն անունը՝ Բարշամ: Սովուս Խորենացու առաջին հաղորդումից բխում է, որ Դարանադի զավադի Թորդան բնակավայր է փոխարվված եղել քանաան-ամորեական Բաալ-շամեն/արամնաստրական Բել-շամին աստծու կուոքը: Ասորից-Միջագետքում այս աստվածը նույնացված էր հունական Զևսի (ապա՝ հոռմնական Յուպիտերի) հետ:<sup>5</sup> Նրա Բաալ-շամեն անունը, որը «Տեր երկնից» է նշանակում, դրա վկայությունն է: Փաստորեն նա զուգահեռն էր Դարանադիի Անի ամրոցում պաշտվող հայոց Արամագողի, որը նույնացն նույնացված էր հունական Զևսի հետ. հնմտ. «զբագինն Զեւս դիցն Արամագրայ», «զմլդիմպիական պատկերն Դինոսի յամուրն Անի»:<sup>6</sup> Այս դեպքում ապասելի էր, որ սեմական այդ աստծու կուոքը դրվեր Անիում, ոչ թէ Թորդանում: Անիում չդրվեր հանդերձ՝ այն դրվել էր նույն Դարանադի զավառում Արամագողի պաշտամունքի կենտրոնական զավառում: Ինչի՞ մասին է խոսում աս: Կասկած լինել չի կարող, որ սեմական այդ աստվածը փոխարինել է «տեղական ինչ-որ աստվածության»:<sup>7</sup> Կասկած լինել չի կարող նաև, որ տեղական-հայկական այդ աստվածության պաշտամունքը սերտ կապի մեջ է եղել Արամագողի պաշտամունքի հետ: Ըստ երևույթին, նա համարվել է Արամագողի մեկ այլ դրասորումը:<sup>8</sup>

<sup>1</sup> Սովուսի Խորենացույ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, Բ, ժող:

<sup>2</sup> Ազարանգեղոյա Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Ազարանգեղոս), Եր., 1983, Շնթ, 784:

<sup>3</sup> Խոր են ա ա ց ի, Ա, ժող:

<sup>4</sup> Ա ն ա ն ի ա ս ի պ ա կ ա ց ի, Տիգրանագիտութիւն եւ տոմար, Եր., 1940, էջ 37:

<sup>5</sup> Ի. Ռ ո ֆ մ ա հ, Ա. Լ ո ւ հ ա ն, Բաալապամ, "Միֆологический словарь", М., 1991, стр. 82.

<sup>6</sup> Ա գ ա ր ա ն գ ե ղ ո ս, Շնթ, 785, Խորենացի, Բ, ժող:

<sup>7</sup> Ս. Հ ա ր ո թ յ ո ւ ն յ ա ն, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001, էջ 46:

<sup>8</sup> Ծիշտ նոյն կերպ Անահիտի մեկ այլ դրասորումը պետք է համարվեր Նանեն, որի մեհյանը գտնվում էր Անահիտ մայր դիցուու պաշտամունքի կենտրոնական զավադի Եկեղեցի Թիլ ավանում (Ազարանգեղոս, Շնթ, 786): Ս.Հարությունյանի կարծիքով, Ասորիցից Հայաստան բականցած դիցուու պաշտամունքը ազդվել էր Անահիտի պաշտամունքից, իսկ նրա անունը «քաղաքական մորք կամ մեծ մորք արվող հայերեն Նանէ (Ան, նանի) բառի հետ» (Ս.Հարությունյան, նույնը):

Այս տեսանկյունից ուշագրավ են հետևյալ հանգամանքները: Խեթերը, Ամարոպակի աստծուց բացի, ունեին նաև «Հատիկի Ամարոպակի աստված» (<sup>9</sup>U har-si-har-ši-ia-as):<sup>9</sup> Հայոց նոր առասպելարանության մեջ Սուրբ Սարգիսը՝ իին հողմ-ամարոպային բնույթի աստվածների շատ գծերի ժառանգորդը, սերտ կազ ունի հացահատիկի պատամոնքի հետ:<sup>10</sup> Նոյնպիսի բնույթ է ունեցել մեր Արամազդի դրսնորումներից մեկը՝ կունդ Արամազդը: Մովսես Խորենացին ասում է. «Ոչ Արամազդ ոք, այլ ի կանոնովսն լինի լինել Արամազդ չորից և այլոց անուանեցելոց ոմանց Արամազդ. յորոց մի է եւ Կունդ ուն Արամազդ»:<sup>11</sup> Կունդ բարին տարրեր բացատրություններ են տվել՝ «քաջ»-ից մինչև «ճաղատ»:<sup>12</sup> Մեր կարծիքով, կունդ/կունս բառը ունգային տարրերակն է կուտ «հատ սերման, ունդ ջամբ ի կերակոր թռչոնց», «կորիկ» բառի:<sup>13</sup> Նշելով, որ հայերենում մինևոյն բառի ունգային տարրերակով հանդես գալու հանգամանքը հետին շրջանի հայերենում հաճախ հանդիպող երևոյթ է (հմնտ. լինգ, կանանչ, մնենձ, մնենք, քինք և այլն), Հ.Աճառյանը նկատել է տալիս, որ դա խորը չէր նաև իին հայերենին (հմնտ. <sup>14</sup>\*մաչ, որից ունգայանի հավելմանք՝ մանչ):<sup>14</sup> Բուսաշխարիի առնչությամբ ուշագրավ է կունդ-ից առաջացած կնդել բայը, որը նշանակում է նաև «փետել, ծառի բոլոր տերևները փորսնել»:<sup>15</sup> Քանի որ կուտը, հունդը, կորիզը լերկ են, հասկանալի է, թե ինչու կուտ-ի կունալ/կունդ տարրերակը նշանակում է «հերաքափ, ճաղատ»:

Բարշամին դիցանվան մեջ պարզ նկատելի են Բարշամ և Բել-շամին անունների բաղարկման հետքերը, որովհետև սեմական լ-ի դիմաց առկա է հայկական բ-ն, իսկ բառավերջին պահպանված է սեմական անվան -ին վերջավորությունը: Ինչպես որ բարկված անուններից մեկը՝ Բել-շամին-ը, սեմական սոուզարանություն ունի, այնպես էլ մյուսը՝ Բարշամ-ը, հայկական սոուզարանություն է ունենալու: Մեր կարծիքով, այն կազմված է \*բարշ- հիմքից և -ամ վերջածանցից: Հմնտ. Արամ, Արգամ, Գեղամ, Կառնամ, Պատրամ և այլն: Տեսենք թե ինչ է նշանակում այս \*բարշ-ը: Հայերենում գործած մի օրինաչափության համաձայն, -րշ- հնչյունակապակցությունն ստացվել է հ.-ե.-րս- հնչյունակապակցությունից: հմնտ. հ.-ե. \*tors->րորշ-ոմ, \*trs->բարշ-ամ:<sup>16</sup> Ըստ այսմ, մեր \*բարշ-ը ենթադրում է հ.-ե. \*bhrs- նախաձևը, որը ներկայացնում է ստորին ձայնադարձը հ.-ե. \*bher-ի (վերին ձայնդարձ): Վերջինիս հիմքում հ.-ե. \*bher- «սուր լինել» արմատն է, որով հներկության հետավոր անցյալում կազմվել են ընդեղեններ նշող բառեր (դրանց վայրի տեսակները ծալող քիստեր ունեին): Արմատի ստորին ձայնադարձը «հացահատիկ» նշանակությամբ ժառանգ լեզուներում տվել է այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ լատին. far «հաճար», իին խլ. barr «ցորեն», իին խլ. baïrgen «հաց», սերբախորվ. bâr «կորեկի տեսակ», բուլղար. брашно «ալյուր», իին ռուս. ворошко «ալյուրից պատրաստված ուտելիք», «սնունք» (բարք. ռուս. բօրոշո «աշորայի ալյուր»):<sup>17</sup>

Բարշամի նախապես դրական կերպար լիմելու մասին կարող են վկայել նույն \*բարշ հիմնակազմ բաղադրիչով կազմված հետևյալ բառերը: 1. Բարշոկ. Գր. Սագիստրոսի հիշատակած այս բառի համար ենթադրվում է «մեղմ, անյշ» նշանակությունը:<sup>18</sup> 2. «Բարշուք - գեղեցիկ» բառը վկայված է միջնադարյան «Բարզիք հայոց»-ում:<sup>19</sup> Հավանաբար, այս բառերը նախական \*բարշուկ-ի արտասանական տարրերակներն

<sup>9</sup> “Keilschrifturkunden aus Boghazköi”, Hf. 1-30, Berlin, 1923-1939 (XXV, 23, IV, 45).

<sup>10</sup> Ա. Դանական Ավանդապատում, Եր., 1969, էջ 364-365:

<sup>11</sup> Խոր են աշցի, Ա. լա:

<sup>12</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Եր., 1973, էջ 659-660: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհարար բարզ. և մեկնաբանություններ. Աստ. Մայսասայան, Եր., 1981, էջ 103, 475 ծան. 92:

<sup>13</sup> «Նոր բառզիքը հայկական լեզուի», հ. I, Եր., 1979, էջ 1124:

<sup>14</sup> ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 256:

<sup>15</sup> ՀԱԲ, հ. II, էջ 659:

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 156:

<sup>17</sup> “Этимологический словарь славянских языков”, т. II, М., 1975, стр. 212-213; т. III, М., 1976, стр. 131, 134-135; Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, стр. 872-873.

<sup>18</sup> ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 428:

<sup>19</sup> «Բառզիքը հայոց», Քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Հ.Ամայանի, Եր., 1975, էջ 52:

են (\*բարշուկ-բարշ-ուկ՝ նվազական-փաղաքական –ուկ վերջածանցի հավելումով): Կարևոր հիմնակազմ \*բարշ-ին վերագրված «մերմ, անուշ, գեղեցիկ» նշանակություններն են: Ըստ երևոյթին, նախնական Բարշամը, լինելով հացահատիկի անձնավորում աստվածություն, ըմբռնվել է նաև այդպիսին: Առասպելարանական նտածողությամբ բույսերը և, մասնավորապես, հացազի բույսերը անձնավորվում էին գեղեցիկ պատանու կամ երիտասարդի տեսքով: Հիշենք, որ մեր Արան կրում էր Գեղեցիկ նակդիրը,<sup>20</sup> իսկ նա «հայոց մետնող-հատնող աստվածությունն է՝ բուսաշխարհին, մասնավորապես հացահատիկներին ու հողին առնչվող»:<sup>21</sup> Այսպիսով, հաստատվում է, որ Բարշամը եղել է հայոց հնագույն աստվածություն մեկը, իսկ նրա անվան հիմքում ընկած է հ.-ե. \*bher- արմատը «հացահատիկ» է նշանակել: «Հացահատիկ» նշանակող բառից հացահատիկի անձնավորում աստվածության անվան առաջացնան մեկ ուրիշ օրինակ է Շարայ դիցանունը: Հացառատ Շիրակի և նրա բնակչության անվանադիր համարված<sup>22</sup> Շարայի անունը ծագումնարանական կապի մեջ է աշարայ//աշդրայ (Արցախում՝ շարա) բառի հետ<sup>23</sup> (հննտ. Շիրակի հետ Կամսարական նախարարական տոհմի տիրույթը կազմած հարևան գավառի Աշարունիք և Աշորներ համահիմք անունները):

Հացահատիկն անձնավորող և բուսաշխարհի ներկայացուցիչ համարված աստվածը, բնականաբար, ի սկզբանե ասորեստանցի և քշնամի չեր կարող ըմբռնվել: Բարշամը հակառակորդ կարող էր ըմբռնվել միայն Արեգ/Վահագն աստծու երկրագործների կողմից՝ վերջինիս հետ ունեցած բախման մասին պատող առասպելարանական դրվագի պատճառով: Այդ դրվագը ևս խոսում է Բարշամի ամպրոպային բնույթի մասին, որովհետև արտացոլում է հնդկալուսպական արևային և ամպրոպային երկու զիսավոր աստվածությունների հակամարտության առասպելը: «Ո-իզվեղայում» այն արտացոլված է արևային Սուրյայի և ամպրոպային Ինդրայի բախման դրվագում:<sup>24</sup> Այդամի մի պայքարի վերիու է պահպանել ամպրոպային Սանասարի և արևային Բարդասարի մենամարտի դրվագը «Սասնա ծոեր»-ում: Անանիա Շիրակացու հաղորդած առասպելում Կաթնածիրի նաև Հարդագողի հետք անվանումը բացատրվում է Բարշամից Վահագնի գողացած հարդի բոլոր հետքով: Իսկ հարդը՝ ցորենի, գարու և այլնի կալսելու ընթացքում առաջացած «ավելցուկ», կարող էր գտնվել միայն հացազի բույսեր մշակող մոտ, որպիսին էր Բարշամը: Իսկ արևարենույթի աստվածների՝ երկնային հովհանների (հննտ. Հելիոս և Ապոլոն),<sup>25</sup> եղջերագոր անաստերը դրա կարիքը զգալու էին, մանավանդ, «ի խիստ ճնրան»: Ուրեմն, հայոց հնագույն այս առասպելում արտացոլված է նաև վաղ հողագործների և վաղ անասնապահների միջև ընթացած մրցապայքարը: Ի դեպ, այն արտացոլված է նաև շոմերական «Խնաննա-Դումուզի» առասպելում: Համաձայն դրա՝ Խնաննա դիցուին (մեր Աստղիկի համարժեքը) երկու թեկնածու-վենսացուներից նախապատվությունը տվել էր հողագործ Էնկիմրուին, բայց արևի աստված Ուստուի միջամտությունից հետո փոխել էր իր որոշումը՝ հօգուտ հովիկ Դումուզիի<sup>26</sup> (իհշենք, որ Աստղիկի ընտրյալ Վահագնն էր):

Բարշամն, ըստ ամենայնի, եղել է ծագումնաբանական նախորդը Կունդ Արամազդի: Վերջինիս առիթով նշենք, որ նախքան մկրտվելը Տրդատ 3-րդը, հավանաբար, փորձ էր արել մեկ միասնական Արամազդի պաշտամունք սահմանելու, որովհետև մեծ և արի, երկնքի և երկրի արարիք, դիցահայր<sup>27</sup> Արամազդի անունից իր ժողովրդին նադրում էր «լիութիս պարարտութեան»:<sup>28</sup> Բնականաբար, այս բարեմադրությունն արվելու

<sup>20</sup> Խորեն նա ացի, Ա, ժե:

<sup>21</sup> Ս.Հ. արտթթ յուն նա նա, նշվ. աշխ., էջ 26-27:

<sup>22</sup> Խորեն նա ացի, Ա, ժե, Բ, դ:

<sup>23</sup> Ս. Պետրոս յա նա նա, Հացագիների մշակության և պաշտամունքի արտացոլումը, Պատմաբանասիրական հանդես (այսինուն՝ ՊԲՀ), 1981, թիվ 3, էջ 187:

<sup>24</sup> Rgv. I, 175, 4; IV, 30, 4; X, 43, 5; “Ригвела. Мандалы I-IV”, M., 1989, стр. 218, 393; B. Топоров, Сурья, “Мифы народов мира”, т. II, M., 1988, стр. 478.

<sup>25</sup> A. Лосев, Аполлон, “Мифологический словарь”, стр. 52, 53; A. Тахо-Годи, Гелиос, նոյնը, էջ 145; M. Соколов, Пастух, “Мифы народов мира”, т. II, стр. 292.

<sup>26</sup> B. Афанасьев, Иванна, “Мифологический словарь”, стр. 244.

<sup>27</sup> Ազարան գեղոս, Ե, 53, Զ, 68, ԺԲ, 127, ՑԹ, 785:

<sup>28</sup> Ազարան գեղոս, ԺԲ, 127:

Իր Կունդ Արամազդի անունից, որովհետև պարարտ-ը նաև «արգավանդ, բերրի, բարգավաճ» է նշանակում, իսկ բարբառներում նաև «ուռճացած (կանաչեղեմ, բույս)», «դալար, բարմ (ծաղիկ)»:<sup>29</sup> Բուսականության, մասնավորապես հացահատիկի առնչությամբ ուշադրության են արժանի ՆՀ-ում բերված հետևյալ օրինակները. «Դաշտ քո լցին պարարտութեամբ», «Կերակրեաց զնոսա ի պարարտութենէ ցորենոյ»:<sup>30</sup>

Վահագն (Արեգ) և Բարշան (Կունդ Արամազդ) առասպելաբանական առձակատման «պատմականացումը» սկսվել էր ավելի վաղ՝ նախքան Բել-շամինի կուտքի փոխադրումը Հայաստան: Պատահարար չէ, որ Մովսես Խորենացու վերորերյալ երկրորդ հադրդման մեջ Բարշանի հակառակորդի դերում հանդես է զայիս ոչ թե «հայոց նախնի Վահագնը», այլ նախնի Արամը, որի անունը նույնական է Ուրարտուի (մեզ հայտնի) առաջին բազավորի Arame//Aramu անվան հետ:<sup>31</sup> Ըստ որում, Արամ նահապետի պատմական նախատիպերը ընդարձակ նվաճումներ իրագործած ուրարտական հզոր բազավորներն են (Բշպուհնից մինչև Ռուսա II):<sup>32</sup> Հայսնի է, որ Արևի աստվածը (<sup>33</sup>UTU, <sup>34</sup>Siuini) ուրարտական բազավորների տոհմիկ աստվածներից էր, արքայատոհմի հովանավոր աստվածներից մեկը,<sup>33</sup> իսկ նախքան Խալդիի բարձրացում՝ նաև պետության գերագույն աստվածը:<sup>34</sup> Նա Վահագնի նախորդ արևարնույթ աստվածն էր, որով էլ իր բացատրությունն է ստանում Բարշանի հակառակորդի դերում Վահագնի փոխարինումը Արամ նահապետով՝ մի կերպարով, որի նախատիպ ուրարտական բազավորներն ընրունվել են որպես Արևաստծու երկրային մարմնավորումներ:<sup>35</sup> Նույն կերպ միջազետքյան-աստրիքյան Բել-շամինի երկրային մարմնավորումներն համարված աստրեստանցի բազավորները Բել-շամինի և Բարշանի նույնացումից հետո դարձել են պատմական նախատիպերը հայոց կողմից աստրեստանցի ընթրնված Բարշանի կերպարի: Այսպես է հայ բանահյուսության մեջ Բարշանն ընկալվել որպես «աստրեստանեայց նախնի»:

Բարշանը բուսաշխարիի հետ սերտորեն կապված է ոչ միայն իր, այլև իր սրբատեղի՝ ծորդան ավանի անվան միջոցով: Ծորդան//Ծորդան անունը կրող բնակավայրեր կային թե՝ Դարանալի զավառում, թե՝ Բասեան զավառում:<sup>36</sup> Կանք կազմված են՝ ան տեղանկանակերտով (հմնտ. Ազատան, Դեղան, Երեւան, Չաւարշան և այլն): Քորդ // քորդ իմքից: Բուսաշխարին վերաբերող այս իմքը առկա է նաև հետևյալ բառերում. քորդ // քորդն «մի տեսակ վայրի բույս է. մարտմխոտ, եզնալեզու, զվիրակ», «կոտեմի նման մի բույս»,<sup>37</sup> քորդիկ (<sup>38</sup>քորդ-իկ) «վայրի բանջար բոլորաձև տերևներով, որ առավելապես բուսնում է արտերի մեջ և որից աղցան են շինում կամ յուղով ու ծվով տապակում»,<sup>38</sup> քորդոշ (<sup>39</sup>քորդ-ոշ, հմնտ. դանդաղ-ոշ, դոդ-ոշ, մոր-ոշ և այլն) «ուռճացած, զարգացած (բույս)», «հոտքի, ուռճացած, բերքի»:<sup>39</sup> Ըստ երևույթին, միջնածայն թի ամելումով է ստեղծվել քորդ (<sup>40</sup>\*քորդ-ոշ) բառը, որը նշանակում է «շրեշ բույսը, մի տեսակ լեռնային ուտելի բույս»:<sup>40</sup> Այս բառերի հիմք քորդ-ը համարվում է հուսալի

<sup>29</sup> «Նոր բառզիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀ), հ. II, Եր., 1981, էջ 630: ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 57-58:

<sup>30</sup> ՆՀ, հ. II, էջ 630:

<sup>31</sup> Գ. Զ ա թ լ կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԾ), Եր., 1987, էջ 441: Մ. Արենյան, Երկեր, հ. I, Եր., 1966, էջ 54:

<sup>32</sup> Ս. Պ ե տ ր ո ւ յ ա ն, Դասերը և եռաղաստիքյան դրսւորումները իմն Հայաստանում, Եր., 2006, էջ 175-177:

<sup>33</sup> Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի բազավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 44-46:

<sup>34</sup> Ս. Պ ե տ ր ո ւ յ ա ն, Նախնական Ուրարտուի զիշավոր աստծու հարցի շուրջ, «ԳՊՄ զիշ. աշխ. ժողովածու», հ. II, Գյումրի, 1994, էջ 226-231, Նոյնի, Արևի աստվածը վաղ Ուրարտուի կրոնական քաղաքականության մեջ, ՊԲՀ, 2005, թիվ 3, էջ 241-246:

<sup>35</sup> Ս. Պ ե տ ր ո ւ յ ա ն, Արևի աստվածը..., էջ 237-240:

<sup>36</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Սա. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջամների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՏԲ), հ. I, Եր., 1986, էջ 611, հ. II, 1988, էջ 475:

<sup>37</sup> ՀՀԲ, հ. II, էջ 120, ՀԱԲ, հ. II, էջ 200:

<sup>38</sup> ՀՀԲ, հ. II, էջ 120:

<sup>39</sup> ՀԱԲ, հ. II, էջ 200, ՀՀԲ, հ. II, էջ 120:

<sup>40</sup> ՀԱԲ, հ. II, էջ 193, հ. III, էջ 544:

սոուզաբանություն չունեցող բառ,<sup>41</sup> այսուհանդերձ, այն կարելի է ծագած համարել հ.-ե. \*pter- արմասի միջին ձայնդարձից՝ -t- աճականով: Նոյն արմասի վերին ձայնդարձը նոյն -t- աճականով ներկայացված է ի դեմք թերթ բառի,<sup>42</sup> որը նշանակում է «ծաղկի, բույսի, տերևի, թռի, որևէ բարակ թիթեղի թերթ»:<sup>43</sup> Նոյն \*թորթ/\*թորդ հիմքն է առկա նաև Տայրի Թորթում//Թորդում (նաև Թորթում, Թորդում) կոչված բնակավայրի և նույնանոն գավառի անվան նեղ: Թորթ-ում հմնտ. սեպագրությամբ ավանդված Kalaruma, Tarkuma, zalruma և այլ տեղանունների –ստ(ա) բաղադրիչները:

\*Bars//Բարշ բաղադրիչով հայտնի առաջին տեղանունը արձանագրված է Ասորեստանի Ծիգլարիվալասար 1-ին բագավորի կողմից Նախրի ցեղամիտրյան դեմ մ.թ.ա. 1112թ. ծեռնարկած արշավանքի նկարագրության մեջ:<sup>44</sup> Նա պատմում է նախրյան 23 երկրների «քագավորների» դեմ իր տարած հաղթանակի մասին:<sup>45</sup> Նախրյան այդ երկրներից վերջինը հիշատակված Daisaenii-ն հստակ տեղադրություն ունի՝ դա հետագա Տայրն է նորոնի միջին հոսանքի շրջանում:<sup>46</sup> Նախսավերջինն իշխատակված նախրյան երկիրը Abarsiuni-ն է, որը, ենթադրաբար, տեղորոշվում է Daisaenii//Տայրից անմիջապես հարավ,<sup>47</sup> այսինքն՝ հետագա Կարին և Բասեան գավառների տարածքում:<sup>48</sup> Abarsiuni երկրանունը տրոհելով A-bars-iuni բաղադրիչների, մենք նրա երկրորդ՝ -bars-, բաղադրիչը արմատակիցն ենք համարում Բարշամ դիցանվան: A-bars-iuni բաղադրիչների տրոհելիս, այս երկրանվան առաջին՝ a-, բաղադրիչը կարելի է համարել նախահավելվածական ձայնավոր, իսկ երրորդ՝ -iuni, բաղադրիչը նոյնացնել հայերեն –ին վերջածանցի հետ: Հնդեվրոպական ծագումով այս վերջածանցը<sup>49</sup> առկա է ածիմ, ալին, հերին, մրջիմ<sup>50</sup> և այլ բառերում, սեպագրությամբ ավանդված հայկական Danziun, Zanziuna և այլ տեղանուններում:

Բասեան գավառը, Կարինի հետ միասին, հնագույն Արարախունի երկրի մասը կազմելու նասին է խոսում նրա Բասեան անունը՝ բարկացած Բաս- հիմքից և -եան վերջածանցից: Հայերեն -եան վերջածանցին վերագրելով տարբեր (հնդեվրոպական-իրանական և հնդեվրոպական-հայկական) ծագում՝ Գ. Զահուկյանը ուշադրություն է հրավիրում հետևյալ հանգամանքի վրա. «ծագմամբ սրա հետ կապված է արյոր -եան(-ը) հավաքականը՝ գործեան, գրեան(-ը), այլև խոզեան, մոզեան և այլն:»<sup>51</sup> Բասեանը տեղանվան կազմության տեսանկյունից հմնտ. Հաշտեանը, Թառձեանը, Խորձեանը տեղանունները:<sup>52</sup> Բասեան տեղանվան Բասեանը տարրերակը խոսում է իր ցեղանկանական ծագման մասին: Բասեան ցեղանուն-տեղանվան հիմնակազմ բառ բաղադրիչը կարող էր առաջանալ հնագույն \*bars-ից՝ -r-ի վաղ անկումով (հմնտ. նոյնական անկման դեպքերը հետագա հայերենի մի շաբթ բառերում. մրսիլ>մսիլ, դուրս>դուս, ներս>նես, խարշել>խաշել և այլն):<sup>53</sup> Իսկ այդ նոյն \*bars- (<հ.-ե. bhrs- «հացահատիկ») նախաձևն էր, ինչպես տեսանը, առկա Abarsiuni երկրանվան և Բարշամ դիցանվան մեջ:

<sup>41</sup> ՀԱԲ, հ. II, էջ 200:

<sup>42</sup> Նոյն տեղում, էջ 175, 185:

<sup>43</sup> Նոյն տեղում, էջ 175:

<sup>44</sup> В. Якобсон, Месопотамия в XVI-XI вв. до н. э., “История древнего мира. Ранняя древность”, М., 1989, стр. 208.

<sup>45</sup> И. Дьяконов, Ассирио-аввилонские источники по истории Урарту, “Вестник древней истории”, 1951, 2, N 10, 11;Հայ ժողովրդի պատմության քրեստմաստիա, հ. I, Եր., 1981, էջ 19-20:

<sup>46</sup> Н. Арутюнян, Библейши (Урарту), Еր., 1970, стр. 145, 45, 48; Նոյնի, Топонимика Урарту (այսուհետև՝ ՏՅ), Еր., 1985, стр. 70-71.

<sup>47</sup> ՏՅ, стр. 7.

<sup>48</sup> Ս.Երեմյան, Հայաստանը լսու «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 44, 58, 106, 110:

<sup>49</sup> ՀԼՊՆԾ, էջ 238-239:

<sup>50</sup> ՀԱԲ, հ. I, էջ 360, հ. III, էջ 86, 371:

<sup>51</sup> ՀԼՊՆԾ, էջ 355:

<sup>52</sup> Гր. Капанդяն, Историко-лингвистические работы, т. II, Еր., 1975, стр. 171.

<sup>53</sup> ՀԱԲ, հ. III, էջ 371, 444, հ. I, էջ 686, հ. II, էջ 347: Տայրի Ասեաց վոր գավառանունը արձանագրել է ս հնյունին նախորդած բ-ի անկման մի վաղ օրինակ: Գավառի կենտրոնատեղի բնակավայրի Արսիս (այժմ՝ Էրսիս) անվան մեջ բ-ի դեռևս պահպանվում էր (Ս.Երեմյան, նշվ. աշխ., էջ 40, 110):

Բասեան տեղանունն ուներ Բասան (նոյնպես հին) և Բասեն (համեմատաբար նոր) տարբերակները ևս: Փավստոս Բուզանդի վկայությամբ Խոսրով Կոտակ քաջավորի (330-338ք.) հրամանով Վաչե սպարապետը սրածել էր այս գավառի խոռվարար Որդունի նախարարական տոհմը, որի Որդորու բուն զուղը «ամենայն սահմանօքն հանդերձ» հանձնել էին Բասեան/Բասանի եալսկոպոսին, «որ ինքն իսկ է յերկրին Բասանու»:<sup>54</sup> Բասան-ը որպես հասարակ անուն մեկ անգամ էլ հիշատակված է միջնադարյան «Բառզիրք հայոց»-ում. «Բասան- տունկ հզօր, կամ տունկ ասուուծոյ»:<sup>55</sup> *Smtak* բառը դժուար վաղ գրաբարում թե՝ «ծառ, բուփ, բույս» է նշանակել, թե՝ «սերմ, ցանք», որովհետև նրա *տնկել* բայական ձևը նշանակում էր նաև «սերմանել, ցանել»:<sup>56</sup> Բասան բարին տրված վերոբերյալ բացատրությունները անվարան կերպով կարող ենք վերացնել նաև Բասան//Բասեան տեղանվանը և համարել հետևանքը Բաս-ան//Բաս-եան (<\*bars--ե. \*bhrs-) լեզվաբանական կապի: Փոխանցման միջանկյալ օղակն է արտացոլում հին հոյների կողմից Բասեանի բնակչությանը տրված Փաստառու:<sup>57</sup> (Փաս-առ-օ//Բաս-եան-ը) անունը, որը վկայում է տեղանվան \*բաս- բաղադրիչի հ.-ե. \*bh-ով սկսվելու, որեւն, նաև \*բաս- <\*bars--ե. \*bhrs- անցման օրինաշափ լինելու օգտին (հ.-ե. \*bh- >հայ. բ, հուն. φ):<sup>58</sup> A-bar-siuni և Բասեան տեղանունները հ.-ե. \*bhrs- «հացահատիկ» նախաձնին հանգող իրենց բաղադրիչներով, Բասեանի Թորդան//Թորքան տեղանվան հետ միասին խոսում են տեղում հացազգի բույսերի նշանության, որանց և Բարշամի պաշտամունքի խոր արմատների մասին: Մշակության առքիվ հիշենք, որ հայ շինականի ջանադիր աշխատանքի շնորհիվ ընդունակ Մեծ եղեռնը, Բասեանը եղել է հացառատ և հացառաք զավառ: Իզոր չեր թորքական առածն ասում. «Թորքումի պես մառան ունենամ, Բասենի պես՝ ամբար»:<sup>59</sup>

Բարշամ(ին)ի կրած *Սայիստակափառ* մակղիքը բացատրվել է նրա բազինը փորսվիրից, բյուրենից և արծարից պատրաստված լիներու հանգանանքով:<sup>60</sup> Կարծում ենք, որ, ընդհակառակը, նրա կրած *Սայիստակափառ* մակղիքն է պատճառ դարձել, որ նրա կուոքը («զպատկերն») պատրաստվեր «ի փղոսկրէ եւ ի բիրեղէ՝ կազմեալ արծաթով»:<sup>61</sup> Իսկ *Սայիստակափառ* նշանակում է «սայիստակարպանք», որովհետև սայիստակա-փառ բարի երրորդ բաղադրիչը՝ կատ-ը, նշանակում է «շապիկ, բարակ մաշկ, թաղանք»:<sup>62</sup> Կարծում ենք, որ խոսքը Բարշամ(ին)ի բուսական դրսառումներից մեկի՝ քորիկ ցորենի մասին է: Զորիկ ցորենի հասկը, ի տարբերություն կարմրահատ ցորենի, քիստեր չունի, այն երկար ու սպիտակ է, ինչպես սպիտակ էր նաև նրանից պատրաստված բասենյան քիմիկ լավաշը:<sup>63</sup>

Արևմտյան Եփրատի վերնագավառը բռնած Կարին գավառը<sup>64</sup> նոյնպես հնագույն ժամանակներից հայտնի է եղել որպես հացառաք կենտրոն: Այստեղ էր գտնվում խեթական արձանագրություններից հայտնի հայասական <sup>սրբ</sup>Arzija քաղաքը,<sup>65</sup> որի անունով երթեմն նրա շրջանը ևս կոչվում էր «Arzija քաղաքը»:<sup>66</sup> Այստեղից,

<sup>54</sup> Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիմ Հայոց, Եր., 1987, Գ, դ:

<sup>55</sup> Բառզիրք հայոց, էջ 50:

<sup>56</sup> ՆՀԲ, հ. II, Եր., 1981, էջ 885, 891:

<sup>57</sup> X e n., Anabasis, IV, VI, 5; VII, VIII, 25.

<sup>58</sup> Գ. Զ ա լ կ յ ա ն, Հայերենը և հնդեվրոպական հիմ լեզուները, Եր., 1970, էջ 85:

<sup>59</sup> Գ. Հ ա կ յ ա ն, Ներքին Բասենի ազգագրությունը և բանակյուսությունը, Եր., 1974, էջ 14: Հայտնի է, որ Թորքումի զավառում «Հացահատիկի նշակությունը քիչ տեղ էր զրավում, որան հակառակ, ձորախովիտներում ու նախանոնային վայրերում տարածված էր այգեգործությունն ու պտղաբուծությունը» (ՏԲ, հ. II, Եր., 1988, էջ 476):

<sup>60</sup> Հ. Յ ա հ, Օպեր բելառուսական և ազգային լեռնային ազգային պատմություններ, Եր., 1866, սր. 24; Ազարանգելու, Հայոց պատմություն, Աշխարհաբար քարզմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղանձոյանի, Եր., 1983, էջ 519, ծան. 441:

<sup>61</sup> Խ ո ր ե ն ա ս ա ց ի, Բ, ժող:

<sup>62</sup> ՆՀԲ, հ. II, էջ 932:

<sup>63</sup> Գ. Հ ա կ յ ա ն, Աշխատական լեռնաշխարհի տեղանունները, Եր., 1971, սր. 64-67, 139-141.

<sup>64</sup> Ս. Ե ր ե ն ա ս ա ց ի, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր., 2004, էջ 42, 43:

Արևանյան Եփրատով հացահատիկ առաքելու վերաբերյալ խեթական արձանագրություններից մնակում պահպանված է հետևյալ տեղեկությունը. «Ըիսիյատիզա քաղաքից նավերը Սամուխա քաղաք բերքը հասցին առաջին ուղերթով հետևյալ կերպ... քանի որ ջուրը ծանծաղ էր, ապա Քիսիյարիզա քաղաքում նավերին բարձեցին հետևյալ քանակությամբ. [առաջին ուղերթով] 120 չափ գարի, իսկ երկրորդ ուղերթով՝ 130 չափ հաճար: Հազար իիսունչորս զինվոր նախապես լաստերը բերնավորում են Արցիյա քաղաքում»:<sup>67</sup> Ուրեմն, Արցիյա քաղաքից գետի հոսանքն ի վայր լաստերով (կամ նակույկերով) հացահատիկը հասցվում էր Քիսիյարիզա//Քիսիյարիզա՝ հետագա Բրաոիճ, որտեղ այն բարձելով նավերին հասցնում էին Արևանյան Եփրատի մեջ ոլորանի շրջանում գտնվող Սամուխ:<sup>68</sup>

Հայասական Արցիյա//Արզիյա բնակավայրը հետագա Արծնն է, որի անունը՝ իր արծ- բաղադրիչով նույնական է Arzii-ի արշ- բաղադրիչի հետ (մի դեպքում հավելված է -մ մասնիկը, մյուսում՝ լա ածականակերտ վերջածանց):<sup>69</sup> Arz-//Արծ- արմատը նույնն է արծաք բառի արծ- բաղադրիչի հետ՝ ծագած հ.-ե. \*arg- «փայլել» արմատից. հմնտ. ազգակից լեզուների նույնարմատ բառերից հին հնդկ. րայատա- «արծաք, արծաքույն», «սայիտակ», հին պարս. Ardata, բոխար. արկյան, հուն. ἄργυρος, լատին. argentum «արծաք»:<sup>70</sup> Հ.-ե. \*arg-ը առկա է նաև ազգակից լեզուների հետևյալ բառերում. խեթ. ḥarki, բոխար. Ա ḥarki, բոխար. Բ ḥarkwi, հուն. ἀργές, հին հնդկ. ἀρյυνα-, որոնք նշանակում են «սայիտակ», «պայծառ (գույնով)»:<sup>71</sup> Ընդ որում, «արծաք»-ի և «սայիտակ»-ի լեզվաբանական-տրամարանական կապի վկաները հին հնդկ. րայատա- և խեթերեն հարկի բառերն են, որոնք թե՝ «արծաք» են նշանակում, թե՝ «սայիտակ»:<sup>72</sup> Զանի որ հետագա Կարին զավառը ևս ընդգրկած Abarsiumi հենագույն անվան մեջ առկա է \*bars-//\*Բարշ «հացահատիկ» բառը, ապա զավառի և հենագույն կենտրոնի Arzii անվան մեջ էլ կարելի է տեսնել քոյլի ցորենի և նրա անձնավորում Բարշան աստծու սայիտակափառ՝ «սայիտակաթաղանք» մակրիքի համարժեքը (մանավանդ որ Arzii, Արծն տեղանունները և արծաք բառը արմատակիցներ են, իսկ Բարշամինի կուոքը «կազմեալ էր արծաքով»):

Հնագույն աստվածությունները իրենց սրբատեղի բնակավայրերի հետ կապված էին ոչ միայն իրենց պաշտամունքի ծիսական կողմով, այլև հաճախ դրանց անունների մեջ իրենց էության կամ գործառույթի այս կամ այն կողմի դրսությունը: Ապացուցված է, որ դեռևս Հայաստանում կային այնպիսի բնակավայրեր, որոնք լինելով հայասական (հնագույն հայկական) այս կամ այն աստծու սրբատեղիները՝ կրում էին այդ աստվածների հայտնի մակրիքները: Այդպիսի բնակավայրերից էր, օրինակ, ՄԱՐԱՆԻ-ն, որը ամարոպային բնույթի աստվածներից մեկի՝ <sup>4</sup>Ս-ի (գաղափարագիր է) պաշտամունքի կենտրոնատեղին էր:<sup>73</sup> Arn-i-յա բաղադրիչներից կազմված տեղանվան մեջ -իա-ն հնդեվլուպական ծագումով վերտիիշյալ ածականակերտ-տեղանվանակերտ վերջածանց է, իսկ Arn- հիմքը հայերեն առն բառն է:<sup>74</sup> Այս բառը հնդեվլուպական ծագումով այր «սողամարդ», «ամուսին», «արի, քաջ, կտրիճ» բառի ածանցյալն է. հմնտ. առն տալ «ամուսնանալ», առնարար «արիարար», առնացի բառերը,<sup>75</sup> նաև նույնարմատ առն «արու վայրի ոչխար» բառը:<sup>76</sup> Հեքանոսական Արամագդ-Ձևաի (Արամագդ-Ձևաի)

<sup>67</sup> KUB, XXXI, 79, I, 4-13, B. Խաչատրյան, Աշվ. աշխ., էջ 64:

<sup>68</sup> B. Խ ա գ ա ր ք ա ն, Աշվ. աշխ., էջ 65, 67, 139-140:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 67, ծան. 167: Հնդեվլուպական ծագումով այս վերջածանցը -իա և -իա տեսքով առկա է խեթական, աստրենտանյան, ուրարտական սեպազիր արձանագրություններից հայտնի Հայկական լոռնաշխարհի ուղիշ բազմաթիվ տեղանուններում ևս, իսկ -ի տեղանվանակերտի տի տեսքով պահպանված է Լոռի, Կարրի, Կումայրի, Տրի, Փարսի և այլ տեղանուններում:

<sup>70</sup> ՀԱԲ, հ. I, էջ 317-318:

<sup>71</sup> Ի Ա Յ Ա, տ. II, ստր. 713.

<sup>72</sup> Նույնը:

<sup>73</sup> KUB, XXVI, 39, IV, 29.

<sup>74</sup> U. Պ ե տ ր ո ս յ ա ն, Դասերը և եռադասության դրսությունները հին Հայաստանում, էջ 336-337:

<sup>75</sup> ՀԱԲ, հ. I, էջ 172-173:

<sup>76</sup> ՀԱԲ, հ. I, էջ 261:

արի մակդիրը<sup>77</sup> նույնպիսի ծագում և նույնպիսի իմաստ ունի. *արի-այրի*: Ըստ երևոյթին, հերանու հայերի ամպրոպային աստվածը (Արամազդ-Զևսը) իր արի մակդիրը ժառանգել է հայասական նույնաբնույթ նախորդից, որի մակդիրը մեզ է հասել նրա սրբավայր քաղաքի Arniya անվան մեջ:

Խեթական նույն արձանագրության մեջ հիշատակված են նաև ամպրոպային բնույթի հայասական մեկ այլ աստված՝ <sup>4</sup>U.takšanna-ն, և նրա սրբազն քաղաքը՝ Arhīta-ն:<sup>78</sup> Այս աստծու տակշանա//<sup>\*</sup>taksana մակդիրի իմացում հ.-ե. \*tek- արմատն<sup>79</sup> է՝ իմացք հայերեն թերել «կրանով կոկել, շինել, սրել» բառի, <sup>80</sup> իսկ -առա Վերջավորությունը նույնական է հայերեն -աճ վերջածանցի հետ (հմտն. *Jugam, կոս, քացան, փական* և այլն): Անկասկած, ամպրոպային բնույթի այս աստվածը եղել է դարբին աստված՝ դարբնության և արինատագործության հովանափր աստված: Ուրեմն, նրա հիշյալ մակդիրի իմաստային կրկնորդն է նրա սրբավայր քաղաքի Arhīta (<<sup>\*</sup>arh-ita> անունը: Մրա առաջին քաղաքիչը արմատակիցն է հայերեն *արհեստ* (<արհ-եստ> բառի, <sup>81</sup> իսկ երկրորդ քաղաքիչը նույնական է հայերեն -իր վերջածանցի հետ):<sup>82</sup>

Ամենայն հավանականությամբ, աստծու կրած մակդիրով նրա պաշտամունքի կենտրոնատեղի բնակավայրի անվանադրման երևոյթի պատճառը եղել է այդ բնակավայրում գտնված նույն աստծու սրբատեղիի կրած համապատասխան անունը: Այսինքն՝ աստծու մակդիրով նախ կոչվել է իր սրբատեղին, ապա՝ վերջինիս կից բնակավայրը: Այս առիքի հիշենք, որ այդ օրինաչափությունը գործել է քազում դարեր՝ իրեն զգալ տալով անգամ մեր օրերում: Օրինակ, Վաղարշապատ քաղաքի *Էջմիածին* անվանակոչության համար իմայր է ծառայել Վաղարշապատում գտնվող Մայր տաճարի կրած Ջրիստոսի *Էջմիածին* մակդիրը, իսկ Գյումրի քաղաքի նաև *Յորվիլքին քաղաքը* (ըստ ջավախեցիների) կոչվելու պատճառը տեղի Սուրբ Աստվածածին նկղեցու Յոր վեցր ժողովրդական անունն է Սուրբ Աստվածածին համապատասխան մակդիրը:

Հայասական դիցարանի 14 աստվածություններից<sup>83</sup> երեքը ամպրոպային բնույթի աստվածություններ էին կամ նույն *Անպրոպի* աստծու երեք տարբեր դրվագները:<sup>84</sup> Դրանցից երկուսին արդեն ծանոթ ենք: Ինչպես տեսանք, դրանցից <sup>4</sup> զաղափարազքի տակ հանդես եկած աստվածը բացահայտ (անխառն) ամպրոպային բնույթ ունեցող աստվածություն էր՝ առնականությունը կրող ռազմիկ աստված, իսկ <sup>4</sup>U.takšanna-ն ամպրոպային գծերով օժտված դարբին աստված էր: Բայց հայասական դիցարանը զիսավորում էր ոչ թե սրբանցից որևէ մեկը, այլ <sup>4</sup>U.GUR աստվածը: Ո՞վ էր այս զաղափարազքի տակ քարճված և ամպրոպային (<sup>4</sup>U) գծերով օժտված աստվածը, ինչպիսի՞ լրացուցիչ գծեր ուներ նա: Այս նույն զաղափարազքի տակ հանդես եկած աստվածություն կար նաև խոտիհական դիցարանում, որտեղ այդ աստվածը նույնացվում էր ընդերքի/ամբողջիմյան աշխարհի շումերական Ներզալ աստծու հետ:<sup>85</sup> Խոտիհական Արապխայուն նրան էր ձռնված հունակի ամիսը:<sup>86</sup> Ըստ այսմ, պատահական չէ,

<sup>77</sup> *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Ե,* 53, Զ, 68, ԺՐ, 127:

<sup>78</sup> KUB, XXVI, 39, IV, 32.

<sup>79</sup> U. Պ ե տ ր ո ս յ ա ն, *Սուրբիկ I-ի արևելյան արշավանքի երրուղին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 55-56:*

<sup>80</sup> ՀԱԲ, հ. II, էջ 178-179:

<sup>81</sup> U. Պ ե տ ր ո ս յ ա ն, Աշվ. աշխ., էջ 56

<sup>82</sup> Հավանարար, զափիր, թիփիր, կնճիր, սամիր քառերում, Արտիր, Բրիր, Գնիր, Չուիր և այլ անձնանուններում առկա -իր վերջածանցը ծագում է հ.-ե. \*et-rg: <-ե- . \*-et-/\*-ed- մասմիկների վերաբերյալ <.Աճառյանը գրում է. «Այս մասմիկները առանձին նշանակությունից գործել, ծառայում են ընդարձակելու բառի բունքը» (<.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 111): Արհաս քատից բայց -եսա վերջածանցն առկա է նաև զովեսա, համեստ, տտեստ, պահեստ քառերում (Նույնը, էջ 114: ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 671-672):

<sup>83</sup> KUB, XXVI, 39, IV, 26-34.

<sup>84</sup> Г. В а р դ ւ մ յ ա ն, *Дохристианские культуры армян, Հայ ազգագրություն և քանակացություն*, 18, Եր., 1991, էջ 67:

<sup>85</sup> Н. Я н կ օ վ ս կ ա յ, *Աշուր, Միտանն, Արքանք*, *“История древнего мира. Ранняя древность”*, М., 1989, стр. 196.

<sup>86</sup> Н. Я н կ օ վ ս կ ա յ, Աշվ. աշխ., էջ 196:

որ Ներգալը ներկայացվում էր մանգաղած սրով:<sup>87</sup> Պատահական չենակ, որ «Խերխութական զրիարերությունների ցուցակում Ներգալը նույնացվում էր Թեշուրին (Ամարովի աստծուն-Ս.Պ.) զրիարերվող հացահատիկի հետ».<sup>88</sup> Այսպիսով, խութական՝<sup>89</sup> U.GUR/Ներգալ աստծու նման ընդերքին և հացահատիկին առնչվող պաշտամունքը էր ունենալու նաև՝<sup>90</sup> U.GUR գաղափարագրի տակ հանդեն եկած հայասական աստվածությունը:

Գր. Ղափանցյանը հայասական այս աստծուն համարում է անդրշիրիմյան աշխարհի, մահվան և հարության անձնավորում աստված՝ Ենթադրաբար նոյնացնելով Արա Գեղեցիկի հետ.<sup>91</sup> Զանի որ՝<sup>92</sup> U.GUR անվան՝<sup>93</sup> U բաղադրիչը խոսում է անվանակիր աստծու նախ և առաջ ամպրոպային բնույթ ունենալու մասին, ուստի նրան պետք է համարել ոչ միայն խութական՝<sup>94</sup> U.GUR/Ներգալի, այլև խերական «Հատիկի Ամպրոպի աստծու» զուգահեռը, հենագույն հայկական Բարշամի և, սրա հետ միասին, նախորդը հերանոսական Կունդ Արամազդի ու ժողովրդական քրիստոնեության Մք Սարօնի:

## ОТРАЖЕНИЕ КУЛЬТИВИРОВАНИЯ ЗЕРНОВЫХ В КУЛЬТЕ БАРШАМА

Резюме

C. Петросян

По древнеармянским эпическим сказаниям, Баршам-противник солнечного бога Вахагна, а также предка армян Арама. По Мовсесу Хоренаци, сирийцы обожествили Баршама, а царь Тигран, найдя в Месопотамии идол бога Баршамина, повелел отвезти в Армению и установить в Тордане. Налицо религиозный синкретизм и его последствие-контаминация армянского теонима *Баршам* и семитского теонима *Баал-шамем* (*Баал-шаммин*).

Теоним *Баршам*-индоевропейско-армянского происхождения. Он состоит из компонентов *Барш-ам* (ср. *Ar-am*, *Aрг-ам*, *Гел-ам*, *Паск-ам* и т.д.). В основе компонента *барш-* этого армянского теонима лежит и.-е. Прототип \*bhṛs- “зерно” (<и.-е. \*bher->латин. *Far* “польба, крупа”, *farina* “мука”, гог. *barizeins* “ячменный”, русск. диал. *Бо́рошно* “ржаная мука” и т.д.). По всей вероятности, бог громоверхец Баршам являлся также олицетворением зерна (ср. хеттск. “бог Грозы зерна”). Известно, что пантеон Хайасы возглавил бог <sup>95</sup>U.GUR. По нашему мнению, под этой идеограммой выступает именно Баршам, наследником которого является бог языческих армян Кунд Арамазд (ср. этикет *Кунд* и арм. слово *кут* “семя, зерно, косточка”).

Наирийский топоним *Abarsiuni* состоит из компонентов *A-bars-iuni*, где *bars* идентичен с *барш* “зерно”. Из того же региона и того же хозяйствственно-культурного круга происходит и топоним *Bacean*<<sup>96</sup>\**Барс-еан*.

<sup>87</sup> В. А ф а н а с ь е в а, Нергал, “Мифы народов мира”, т. II, стр. 212.

<sup>88</sup> Н. Я н к о в с к а я, Եղվ. աշխ., էջ 196:

<sup>89</sup> Гր. К а п а н ի ն, Историко-лингвистические работы к начальной истории армян. Древняя Малая Азия, Еր., 1956, стр. 88-90, 306.